



Կարգապահական գործ թիվ 19244

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի օգոստոսի 04-ի թիվ 94-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/73-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Կարեն Մեծլումյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Տիգրան Խուրշուդյանի, Սիմոն Բաբայանի, Արա Ղազարյանի, Մելանյա Առուստամյանի, Կարեն Սարգսյանի, Սեդրակ Ասատրյանի, Արմեն Ֆերոյանի.

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,
քննության առնելով փաստաբան Կարինե Սիմիդյանին (արտոնագիր՝ 944)
կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Արտակ Միքայելյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Պալատ, հայտնել է, որ Կարինե Սիմիդյանը (**այսուհետ՝ նաև փաստաբան**), հանդիսանալով իր վերաբերյալ քրեական գործով փաստաբան, արդեն մոտ տասն ամիս է՝ իրենից վերցրել է գումար, սակայն իր գործով չի զբաղվել: Մասնավորապես, սկզբում փաստաբանն իրենից պահանջել է 50.000 ՀՀ դրամ՝ փաստաթղթեր հավաքելու համար, այնուհետև՝ ևս 100.000 ՀՀ դրամ՝ դատարանի ծախսերի համար, այնուհետև ևս 40.000 ՀՀ դրամ: Այնուհետև, երբ իր գործն անընդհատ ձգգցելուց և չանելուց հետո Դիմողը նրան հարցրել է, թե ինչն է պատճառը, փաստաբանը պատասխանել է, որ փաստաթղթերը հավաքելու համար ևս 200 ԱՄՆ դոլար է անհրաժեշտ: Դիմողը նշել է, որ ինքը վճարել է փաստաբանին, սակայն վերջինս իր հեռախոսազանգերին չի պատասխանում և խուսափում է իր հետ շփվելուց: Դիմողը խնդրել է միջամտել՝ փաստաբանին վճարված գումարները և նրա մոտ գտնվող փաստաթղթերը վերադարձնելու հարցում:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 11.12.2019թ. թիվ 493-Ա/ԿԳ-19244 որոշման հիման վրա Փաստաբանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.7.2 ենթակետի (նույն կարգավորումը նախատեսված է Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ **Նոր կանոնագիրք**) 2.7.2 ենթակետով), 3.1.8 ենթակետի (նույն կարգավորումը նախատեսված է Նոր կանոնագրքի 3.1.8 ենթակետ), 3.5.5 ենթակետի (Նոր կանոնագրքի 3.5.5 ենթակետի «դ» պարբերություն), 3.6.1 ենթակետի (Նոր կանոնագրքի 3.6.1 ենթակետ), 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների (Նոր կանոնագրքի 3.8.4 ենթակետի համապատասխանաբար 1-ին և 3-րդ պարբերություններ) պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

16.12.2019թ-ին կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Կարեն Քամայանին:

14.01.2020թ-ին Դիմողը կարգապահական գործը նախապատրաստող անձ Կարեն Քամայանի վերաբերյալ բացարկի դիմում է ներկայացրել:

20.01.2020թ-ին Կարեն Քամայանիի վերաբերյալ հայտնված բացարկը բավարարվել է:

22.01.2020թ-ին կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Հովհաննես Մաթևոսյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. Դիմողի և Փաստաբանների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Դիմողը ներկայացել է կարգապահական նիստին, պնդել է նախորդիվ ներկայացված իր պահանջը, հայտնել որ բազմիցս փորձել է կապ հաստատել փաստաբանի հետ, սակայն վերջինիս գտնել չի հաջողվել:

Դիմողը նաև հայտնել է, որ ինքը ստորագրել է պայմանագիրը և լրացրել պայմանագրի վերջին հատվածը, իսկ մնացած հատվածում գրվածը իր կողմից չի գրվել և ինքը ստորագրել է դատարկ բլանկի տակ:

3.2. Փաստաբանի համառոտ բացատրությունները.

Փաստաբանը 03.02.2020 թվականին բացատրություն է ներկայացրել է, որով հայտնել է, որ ինքը հանդիսացել է Դիմողի փաստաբանը, վերջինիս հետ կնքել է պայմանագիր և գործի ելքի հետ կապված երաշխիք չի տվել:

Գործի ընթացքում պատշաճ ծառայություններ է մատուցել Դիմողին՝ մասնավորապես տվյալ գործի շրջանակներում հարցումներ է կատարել և դիմումներ է ներկայացրել ՀՀ ՀՔԾ, ՀՀ ԱԱԾ, ՀՀ Ոստիկանություն, հայցադիմում է ներկայացրել դատարան:

Փաստաբանը նաև հայտնել է, որ զանգել է Դիմողին վճարումներ կատարելու պարտավորության մասին հիշեցնելու նպատակով, սակայն վերջինս իր զանգերին չի պատասխանել:

Դիմողի զանգերին չպատասխանելու հետ կապված փաստաբանը հայտնել է, որ ինքը չի պատասխանել այդ զանգերին, քանի որ արձակուրդի մեջ է գտնվել, սակայն վերադառնալուց հետո զանգել է Դիմողին և նա արդեն իր զանգերին չի պատասխանել:

Փաստաբանը ներկայացել է կարգապահական նիստին և պնդել նախորդիվ իր հայտնածը, ասել է, որ Հանրապետությունում չի գտնվել, այնուհետև երևի թե՛ զանգել է Դիմողին, սակայն այդ փաստը հստակ չի հիշում: Փաստաբանը նշել է, որ մեկ անգամ զանգել է Դիմողին օգոստոս ամսին, սակայն վերջինիս հեռախոսահամարը անհասանելի է եղել:

Փաստաբանը կարգապահական նիստի ժամանակ նաև ընդունել է Դիմողի կողմից նշված այն հանգամանքը, որ պայմանագիրը լրացվել է իր կողմից, իսկ Դիմողն ընդամենը ստորագրել է դրա տակ և իր հասցեն է գրել:

Փաստաբանը նաև պատրաստակամություն է հայտնել սույն թվականի սեպտեմբեր ամսին վերահաշվարկ կատարել և Դիմողին վերադարձնել չկատարված աշխատանքի համար ստացված գումարը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ ախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 16.02.2020թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություն չեն ներկայացրել:

20.02.2020 թ.-ին կարգապահական գործը հանձնվել է խորհրդին:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գրնվող ապացույցները կամ խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու*

արդյունքում *Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում գործի համար նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

1. Փաստաբանի և Դիմողի միջև 09.03.2019 թվականին կնքվել է պայմանագիր, որով Դիմողը պարտավորվել է փաստաբանական ծառայություն մատուցել Դիմողին: *Սույն փաստը հաստատվում է 09.03.2019թ. պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր):*
2. Փաստաբանը Դիմողի գործով դիմումներ է ներկայացրել ՀՀ ՀՔԾ, ՀՀ ԱԱԾ, ՀՀ Ոստիկանություն: *Սույն փաստը հաստատվում է վերոնշյալ մարմինների կողմից ստացված պատասխանների միջոցով:*
3. Փաստաբանը պարբերաբար չի պատասխանել Դիմողի զանգերին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի նամակագրության, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*
4. Պայմանագրով սահմանված չի եղել մատուցվող ծառայության տեսակը և ծավալը, իսկ «մատուցվող ծառայության բովանդակությունը» բաժինը չի լրացվել: *Սույն փաստը հաստատվում է գործում առկա Պայմանագրի պատճենով:*
5. Դիմողը փաստաբանին վճարել է պետական տուրքի համար անհրաժեշտ գումարը: Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:
6. Փաստաբանը հայց է ներկայացրել դատարան 31.01.2020թ-ին ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության ի դեմս՝ ֆինանսների նախարարության՝ գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ և նույն հայցադիմումով ներկայացրել է միջնորդություն պետական տուրքի արտոնություն սահմանելու մասին: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված հայցադիմումով և Դատալեքս տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով (http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421204008811):*
7. Փաստաբանի և վստահորդի միջև քննարկվել է պայմանագրային պարտավորություններից բխող բարոյական վնասի հատուցման հարցը:
8. Փաստաբանի ներկայացրած հայցադիմումը վերադարձվել է, իսկ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը՝ մերժվել: *Սույն փաստը հաստատվում է Դատալեքս տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով (http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421204008811):*

6. Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կարինե Սիմիդյանի (արտոնագիր 944, ստացված՝ 24.10.2009թ.) նկատմամբ 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում 5 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, չհաշված սույն կարգապահական գործը:

Հարուցված վարույթներից մեկը կարճվել է, իսկ չորսով Կարինե Սիմիդյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնցից երկուսով

«նկատողություն» կարգապահական տույժի, մեկով «խիստ նկատողություն» հիմնական կարգապահական տույժի և «8 ժամ լրացուցիչ վերապատրաստում» լրացուցիչ կարգապահական տույժի և ևս մեկով «խիստ նկատողություն» կարգապահական տույժի:

Փաստաբանի նկատմամբ կիրառված «խիստ նկատողություն» կարգապահական տույժերից մեկը և «լրացուցիչ վերապատրաստում» կարգապահական տույժը մարված չէ:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, լսելով Դիմողի և փաստաբանի բացատրությունները և ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Կարինե Սիմիդյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.6.1 ենթակետերի խախտում, իսկ Կանոնագրքի 3.1.8 ենթակետի և 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների խախտման հատկանիշներով փաստաբան Կարինե Սիմիդյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

➤ Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման մասով

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի վերլուծությունից հետևում է, որ փաստաբանի մասնագիտական բարեխիղճությունը ներառում է մի շարք բաղադրիչների միաժամանակյա առկայություն.

Ա. իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն,

Բ. վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն,

Գ. հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի վերլուծությունից բխում է, որ փաստաբանը պարտավոր է՝

Ա. ժամանակին հանդես գալ վստահորդի անունից, ինչն էլ ենթադրում է ՀՀ օրենսդրությամբ համապատասխան գործողությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետների խստիվ պահպանում, իսկ այն դեպքերում, երբ ժամկետներ սահմանված չեն,

տվյալ իրավիճակից բխող հնարավոր սեղմ ժամկետներում համապատասխան գործողությունների կատարում:

Բ. Գիտակցավբար և ջանասիրաբար վստահորդին խորհուրդներ տալու, նրան պաշտպանելու և վերջինիս անունից հանդես գալու գործողության կատարում, ինչը ենթադրում է վստահորդին վերջինիս շահերից բխող լավագույն իրավական լուծումներ առաջարկելու, ողջամիտ, իրավաչափ և իրագործելի խորհուրդներ տալու վարքագծի դրսևորում:

Ըստ գործում առկա նյութերի, Փաստաբանի և Դիմողի կողմից Խորհրդի նիստի ընթացքում տրված բացատրությունների, փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերը ներկայացնելու պարտականությունը դեռևս 09.03.2019թ-ին: Հայցադիմում դատարան ներկայացվել է շուրջ մեկ տարի անց և միայն այն բանից հետո, երբ Դիմողը բողոք է մուտք արել ՀՀ փաստաբանների պալատ:

Բացի այդ, փաստաբանը նախապես Դիմողից պահանջել և ստացել է պետական տուրքի համար վճարման ենթակա գումարը և չնայած դրան՝ ներկայացրել է միջնորդություն պետական տուրքը տարաժամկետելու մասին:

Ավելին, ըստ Դատալեքս համակարգում առկա տեղեկությունների թիվ ԵԴ/2843/02/20 քաղաքացիական գործը հանձնվել է արխիվ 04.05.2020թ-ին, ինչից էլ ակնհայտ է, որ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո փաստաբանի կողմից սահմանված ժամկետում հայցադիմում չի ներկայացվել դատարան:

Վերլուծելով նշված կանոնները Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Նշված կանոններից բխում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ իրականացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն, կամ բավարար չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող հավաստել փաստաբանի մասնագիտական բարեխղճությունը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Ըստ գործում առկա նյութերի, Փաստաբանի և Դիմողի կողմից Խորհրդի նիստի ընթացքում տրված բացատրությունների, փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերը ներկայացնելու պարտականությունը դեռևս 09.03.2019թ-ին: Հայցադիմում դատարան ներկայացվել է շուրջ մեկ տարի անց և միայն այն բանից հետո, երբ Դիմողը բողոք է մուտք արել ՀՀ փաստաբանների պալատ:

Բացի այդ, փաստաբանը նախապես Դիմողից պահանջել և ստացել է պետական տուրքի համար վճարման ենթակա գումարը և չնայած դրան՝ ներկայացրել է միջնորդություն պետական տուրքը տարաժամկետելու մասին:

Ավելին, ըստ Դատալեքս համակարգում առկա տեղեկությունների թիվ ԵԴ/2843/02/20 քաղաքացիական գործը հանձնվել է արխիվ 04.05.2020թ-ին, ինչից էլ ակնհայտ է, որ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո փաստաբանի կողմից սահմանված ժամկետում հայց չի ներկայացվել դատարան:

Փաստաբանի վերը նշված վարքագիծն ակնհայտորեն դուրս է Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերով սահմանված և փաստաբաններից ակնկալվող վարքագծի շրջանակից:

Փաստաբանը ստացել է հոնորար Դիմողի շահերը ներկայացնելու համար և այդպես էլ չի ներկայացրել նրա շահերը դատարանում: Բացի այդ, փաստաբանը ստացել է պետական տուրք վճարելու համար անհրաժեշտ գումարը, սակայն չի վճարել պետական տուրքը և դեռ ավելին, անգամ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մասին իրազեկվելուց հետո չի վճարել պետական տուրքը և կրկին չի ներկայացրել հայցադիմումը դատարան:

Փաստաբանը խախտել է Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջները, քանի որ հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ չի կատարել:

Փաստաբանը խախտել է Կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջները, քանի որ ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ չի տվել և չի պաշտպանել իր վստահորդին շահերը:

Դիմողը կարգապահական նիստի ժամանակ հայտարարել է, որ Պատասխանողի նկատմամբ բողոք չունի: Պալատի խորհուրդը Դիմողի այս հայտարարությունը չի համարում կարգապահական վարույթը Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի մասով կարճելու հիմք, քանի որ՝

- «Փաստաբանության մասին» օրենքի 39.8 հոդվածի այդ հայտարարությունը վարույթը կարճելու պարտադիր հիմք չէ.

- Պատասխանողի արարքը ստվերում է փաստաբանության հեղինակությունը:

➤ **Կանոնագրքի 3.6.1 ենթակետերի խախտման մասով**

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Կանոնագրքի 3.6.1 ենթակետը հստակ սահմանում է փաստաբանի պարտականությունը կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Սույն կանոնի բխում է, որ փաստաբանները ոչ միայն կրում են վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու, այլ նաև տրամադրված օգնության կամ գործի ընթացքի մասին վերջիններիս տեղեկացնելու պարտականություն: Ընդ որում, փաստաբանի կողմից հենց այս պարտականության կատարումն է, որ հնարավորություն է

տալիս վստահորդներին օրինակ տվյալ գործով փոխել իրենց դիրքորոշումը, մոտեցումները կամ նույնիսկ պահանջը: Վերջապես վստահորդի հարցերին պատասխանելը այն ողջամիտ ակնկալիքն է, որ յուրաքանչյուր վստահորդ ունի իր փաստաբանից:

Սույն պարագայում հաստատված է համարվում այն փաստը, որ փաստաբանը չի պատասխանել Դիմողի հեռախոսազանգերին և չի տրամադրել տեղեկություններ գործի ընթացքի մասին, չի պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Նոր կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագրքը նույն արարքը համարում է խախտում, ապա Պալատի խորհուրդը փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապատասխան կետով կամ ենթակետով:

Նոր կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Նոր Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխիղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նոր Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Փաստաբան Կարինե Սիմիդյանի վերոհիշյալ արարքները Նոր կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խմաստով նույնպես խախտում են համարվում, հետևապես, Կարինե Սիմիդյանի արարքը պետք է որակվի Նոր կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ Կանոնագրքի (2012թ.) 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերով:

➤ **Կանոնագրքի 3.1.8 ենթակետի խախտման մասով**

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Խորհուրդն արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ փաստաբանը հանձնարարության պատշաճ կատարումը չի կարողացել ապահովել զբաղվածության կամ որևէ այլ պատճառով, ինչի մասին իրեն հայտնի է եղել հանձնարարությունն ընդունելու պահին:

Վերը նշված կանոնը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ հանձնարարությունն ընդունելու պահին փաստաբանին հայտնի է եղել որևէ պատճառ, այդ թվում նաև զբաղվածությունը, որը խոչընդոտելու է հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարմանը և չնայած այդ հանագամանքին, փաստաբանն ընդունել է հանձնարարությունը:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նկատի ունենալով, որ նշված փաստերը չեն հաստատվել, Խորհուրդն այս մասով փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 3.1.8 ենթակետին հակասող, ուստի սույն ենակետի խախտման հիմքով Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

➤ **Կանոնագրքի 3.8.5 ենթակետերի 1-ին և 3-րդ պարբերության խախտման մասով**

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պարվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Խորհրդի նիստի ընթացքում փաստաբանը հայտարարել է, որ պատրաստ է 2020թ. սեպտեմբեր ամսին կատարել հաշվարկ և վերադարձնել հոնորարի այն մասը, որի դիմաց չի մատուցվել ծառայություն, իսկ Նախագահողի այն հարցի վերաբերյալ, թե արդյոք

Դիմողը գումարը հետ ստանալու խնդրանքով դիմել է փաստաբանին, Դիմողը պատասխանել է, որ նախկինում չի դիմել հոնորարի վերադարձման հարցով, քանի որ չի կարողացել կապ հաստատել փաստաբանի հետ:

Այս մասով արձանագրվել է, որ ըստ էության Դիմողը բողոք չունի: Պալատի խորհուրդը գտնում է, որ այս դեպքում կողմերի միջև նյութաիրավական վեճը սպառված է և վարույթն այս մասով կարճում է:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
- 4) տուգանք
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Կարինե Սիմիոյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Կարինե Սիմիոյանին (արտոնագիր թիվ 944) ճանաչել մեղավոր Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 (Նոր կանոնագրքի 2.7.2 ենթակետ), 3.5.5 (Նոր կանոնագրքի 3.5.5 ենթակետի «դ»

պարբերություն) և 3.6.1 (Նոր կանոնագրքի 3.6.1 ենթակետ) ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Կարինե Սիմիդյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Փաստաբան Կարինե Սիմիդյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.1.8 ենթակետի (Նոր կանոնագրքի 3.1.8 ենթակետ) և 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների (Նոր կանոնագրքի 3.8.4 ենթակետի համապատասխանաբար 1-ին և 3-րդ պարբերություններ) մասով, կարճել:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
Խորհրդի անդամ՝

Սիմոն Բաբայան

04 օգոստոսի 2020թ.
թիվ ԿԳ/73-Ա
ք. Երևան